Վահան Տերյան

Սև գիշերն իջավ իր անհայտ գահից

Սև գիշերն իջավ իր անհայտ գահից
Եվ մութով լցրեց երկինք ու գետին
Խավարեց հեռվում փարոսը հետին.
Սասանում եմ ես ջրերի ահից:
Շողում են, դողում աղմուկով զվարթ,
Անխոս քարանում ու նորից խաղում,
Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում,
Խուլ շառաչում են լարում են թակարդ...
Նավը ճեղքում է ջրի հայելին,
Իր ցուրտ աչքերով ծովն է նայում ինձ,
Կտրված եմ ես երկնից ու հողից
Իր թելն է մանում անխուսափելին:
Գերի է նավը անակնկալին.
Մութով կտրված երկնից ու հողից...

1907